ԱԿ-ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Ա. Ա. ՊԱՊՅԱՆ

Վաշկատուն այն ցեղերը, որոնք հետագայում դարձան ակ-կոյունլու ցեղային միության միջուկը, Միջին Ասիայից Հայաստան, Ատրպատական և Հյուսիսային Միջագետք են գաղթել XIII դ. վերջին[1]։ Օղուզ-Թուրքերի այս ցեղախումբը Տիգրիսի վերին հոսանքներում է հաստատվել XIV—XV դդ.[2]։ Տիրող հարստությունը Բայանդուրի ազգատոհմն էր՝ կոչված ցեղախմբի հեռավոր նախնիի անունով[3]։

Ակ-կոյունլուները կատաղի ու անհաշտ պայքար էին մղում իրենց հիմնական ախոյանի՝ կարա-կոյունլուների դեմ[4]։ Այդ ցեղախմբերի հակամարտությունը սրվում էր նաև նրանով, որ նրանցից յուրաքանչյուրն արդեն ներգրավվել էր թեև հստակորեն չձևավորված, բայց իրենց ուրույն շահերն ունեցող պետությունների խմբի մեջ և իր ախոյանին պարտության մատնելու համար դաշնակիցներ էր որոնում հարևան երկրներից։ Կարա-կոյունլուներն իրենց թշնամու աճող ազդեցությանը դիմակայելու համար երբեմն միավորվում էին Օսմանյան թուրքերի հետ[5]։ Ակ-կոյունլուներն իրենց հերթին դաշնակցային հարաբերությունների մեջ էին Թեմուրյանների հետ[6]։

Ակ-կոյունլու ցեղապետ Կարա-Յուլուք Օսմանը (1394—1434 թթ.) Անկարայի (1402 թ.) ճակատամարտում Լենկթեմուրի բանակին զինակցելու համար հաղթանակից հետո ստացավ Դիարբեքիրն իր շրջակայքով[7]։ Ավելի ուշ, երբ կարա-կոյունլուների հիմնական ուժերը Թավրիզի մոտ փորձում էին կասեցնել Թեմուրյաններին, ակ-կոյունլուները գրավեցին Երզնկան և Սեբաստիան[8]։

Չնայած այս անհաջողություններին, կարա-կոյունլուները շարունակում էին մնալ վտանգավոր և բավականաչափ ուժեղ ախոյաններ։ Նման թշնամու առկայությունը Կարա-Յուլուք Օսմանին ստիպեց քաղաքականապես մերձենալ Տրապիզոնի կայսրությանը։ Նա կնության առավ կայսր Ալեքսիոս IV-ի (1416/17—1429 թթ.) դստերը. «Այն Սպիտակ տոհմին (թէ եւ սեւանուն Գարա Օսման կամ Գարա Յուլուգ) նահապետն՝ արդէն Տրապիզոնի Կոմնենեան Յունաց կայսրութեան հետ ընտանեցեր էր, Ալեքս կայսեր դուստրը կին առնելով»[9]։ Սա ակ-կոյունլուների առաջին քաղաքական միջդինաստիական ամուս-

---

1 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 45։

2 Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 224։

3 P. Sykes, A History of the Persia, v. 2. London, 1921, p. 140.

4 R. Stevens, The Land of the Great Sopy. London, 1962, p. 26.

5 Дж. Ибрагимов., Феодальные государства на территории Азербайджана 15-ого века, Баку, 1962, с. 34.

6 М. Абидова, Государство Ак-коюнлу в Иране во второй половине 15-ого века (автореф. дисс. на соискание уч. степени канд. ист. наук. Л., 1953, с. 6).

7 M. Mazzaoui, M., The Origins of the Safawids, Wiesbaden, 1972, p 11.

8 Дж. Ибрагимов, նշվ. աշխ., էջ 34:

9 Ղ. Ալիշան, Հայ-Վենետ կամ յարաբերութիւնք հայոց և վենետաց ի ԺԳ-Դ և ԺԵ-Զ դարս, Վենետիկ, Ս. Ղազար, 1896, էջ 184—185։

նությունը չէր։ Դեռևս 1352 թ. Կարա-Յուլուք Օսմանի հայրը՝ Ղուտլու Բեկը, ամուսնացել էր Տրապիզոնի կայսր Ալեքսիոս III-ի (1349—1390 թթ.) դստեր հետ[10]։ Ավելի ուշ Ալի-բեկը ևս հետևեց հոր ու պապի օրինակին[11]։

Խոյադրոշ ցեղերի դիմակայությունը բնորոշվում էր մերթընդմերթ սաստկացող ռազմական գործողություններով։ Ընդհարումներից մեկի ժամանակ Կարա-Յուլուք Օսմանը գերվեց, բանտարկվեց Էրզրումում, որտեղ էլ մեռավ[12]։ Հակամարտությունն է՛լ ավելի բորբոքվեց նրա որդու և հաջորդի՝ Ալի-բեկի (1435—1453 թթ.), հայկական աղբյուրներում՝ Սուլթան Համզայի[13] ժամանակ[14]։ Սակայն պայքարն իր բարձրակետին, ապա և հանգուցալուծմանը հասավ Ուզուն Հասանի (1453—1478 թթ.) օրոք։ Նա ակ-կոյունլու տիրակալներից ամենից ականավորն էր. «ոչ միայն հզոր, այլ եւ հեռատես, քան իւր նախորդք»[15] «խրոխտ եւ ահարկու»[16]։ Նա բազմազբաղ և գործուն անձնավորություն էր, ներքին և արտաքին մի շարք կարևորագույն ձեռնարկումների հեղինակ[17]։

Ուզուն Հասանի գահակալության հենց առաջին տարին շրջադարձային էր քաղաքակրթության պատմության համար։ Թուրքերի կողմից Կ. Պոլսի նվաճումը գրեթե իսկույն գիտակցվեց որպես համաեվրոպական աղետ և ունեցավ իր հեղաբեկիչ ազդեցությունը համաքրիստոնեական քաղաքական մտածողության վրա։ Սուրբ երկրի ազատագրման գաղափարն աստիճանաբար իր տեղը սկսեց զիջել թուրքական վտանգին համատեղ դիմակայելու, թուրքերին Եվրոպայից դուրս մղելու և Կ. Պոլիսն ազատագրելու գաղափարին։ Նման դժվարագույն խնդրի իրագործումը պահանջում էր Արևմուտքի և Արևելքի հակաօսմանյան բոլոր ուժերի միասնություն։

Արևելքում դաշնակիցներ որոնելու գաղափարը եվրոպական քաղաքականության համար նոր չէր։ Դեռևս մինչև թուրքերի ի հայտ գալը Հռոմի պապերն ապարդյուն փորձեր էին անում մկրտելու հեթանոս մոնղոլներին և նրանց հետ համատեղ պայքարելու բարձրացող իսլամական ուժի դեմ[18]։ Քաղաքական ճգնաժամ ապրող Բյուզանդիան իր գոյության վերջին հարյուրամյակում հետևողականորեն հետամուտ էր հակաօսմանյան միասնական դինակցության ստեղծմանը[19]։ Բյուզանդական կայսրերից ոմանք (Հովնան V Պալեոլոգոս, Մանուել II) թուրքական նվաճումներից անհանգստացած անձամբ էին ուղևորվել Արևմուտք՝ թուրքերի դեմ ռազմական օգնություն խնդրելու[20]։

Միջազգային ապրանքափոխանակության կարևորագույն հանգուցակետ Կ. Պոլսի և առևտրական մայրուղիների ու խոշորագույն նավահանգիստների թուրքական ռազմակալումը հարվածի տակ դրեց եվրոպական և ասիական մի շարք երկրների կենսական շահերը։ Տնտեսական հսկայական կորուստնե-

---

10 W. E. D. Allen, Problems of Turkish Power in the 16th Century, London, 1963. p. 76.

11 Շահ Իսմայիլ Սեֆևի (փաստաթղթերի և նամակների ժողովածու, աշխատասիրությամբ Արդուլ Հուսեյին Նավայիի), Թեհրան, 1347, (1969), էջ 34 (պարսկերեն)։

12 P. Sykes, նշվ. աշխ., էջ 140։

13 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 45։

14 Дж. Ибрагимов, նշվ. աշխ., էջ 34:

15 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 184—185։

16 Մ. Չամչյանց, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 509։

17 M. Mazzaoui, M., նշվ. աշխ., էջ 11։

18 M. Dorothy, M. Vaughan, Europe and the Turk 1350—1700, Liverpoo', 1954, p. 205.

19 Ե. Դ. Հլաղացպանյան, Բյուզանդիան կործանման նախօրեին (Պատմա-բանասիրական հանդես, 1988, № 2, էջ 60)։

20 Նույն տեղում, էջ 62։

ը կանխորոշում էին այդ երկրների արտաքին քաղաքականությունը, դիվանագիտության մշտահոլով հարց դարձնում հակաօսմանյան զինակցության ստեղծումը և պայքարն Օսմանյան կայսրության դեմ։

Դիվանագիտական շրջանակներում զինակցություն ստեղծելու համար առանձնապես գործուն ջանքեր էին ծավալել Հռոմի պապերը։ Թեև հարցը պարուրված էր կրոնական գաղափարախոսությամբ, ուներ տնտեսական և քաղաքական միջուկ։ Թուրքական նվաճումներն ուղղակի հարված էին Հռոմի պապի ազդեցության ոլորտին, քանի որ Ֆլորենցիայի ունիայով, որը գործեց 1439—1472 թթ., կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիները միավորված էին Հռոմի պապերի գերիշխանության ներքո[21]։

Կ. Պոլսի նվաճման հաջորդ իսկ տարին Նիկողայոս V պապը (1447—1455 թթ..) Լուդովիկո դը Բոլոնյային ուղարկեց Եթովպիա և Հնդկաստան՝ հակաօսմանյան պայքարում ստանալու այդ երկրների տիրակալների աջակցությունը[22]։ Նույն 1454 թ. Վենետիկը Ղարամանիայի բեյլիկի հետ հակաօսմանյան դաշինք կնքեց[23]։ 1455—1458 թթ. դը Բոլոնյան նոր պապի՝ Կալիստոս III-ի (1455—58 թթ.), հանձնարարությամբ լինում է Եթովպիայում և Պարսկաստանում[24]։

Կ. Պոլսի գրավումից հետո, Եվրոպայում նվաճումներին զուգընթաց, Մուհամմեդ II-ը (1451—1481 թթ.) ձեռնամուխ եղավ Անատոլիայի նվաճմանը[25]։ Թուրքական հարձակման ահագնացող վտանգն ամբողջովին պայմանավորում էր հակաօսմանյան բոլոր ուժերի վարքը, ստիպում նրանց համախմբվել։ Արևելքում հակաօսմանյան կարևոր ուժերից էր ակ-կոյունլուների պետությունը։

Ուժերը համախմբելու ուղղությամբ Ուզուն Հասանը ծավալեց դիվանագիտական լայն գործունեություն։ Նա սերտ կապեր հաստատեց Տրապիզոնի Կոմնենոսների հետ՝ 1458 թ. դառնալով նրանց դաշնակիցը և փեսան[26]. «Ուզուն Հասան կամ Հասան Բէկ՝ առաւ Յովհաննէս կայսեր դուստրը, զոր ժամանակակից գրիչք մեր Դեսբինա Խաթուն կոչեն, փոխանակ ըսելու Դեսպատին»[27]։ Դեսպինա Խաթունը՝ Կատերինեն[28], Տրապիզոնի կայսր Հովհաննես IV Թեոդորայի (1429—58 թթ.)[29] կամ այլ անվանմամբ Կալո Հովհաննեսի դուստրն էր[30]։ Աներոջ միջնորդությամբ Ուզուն Հասանը փորձ արեց հակաօսմանյան դաշինք կնքել նաև Սինոպի տիրակալի հետ։ Նոր դիվանագիտական քայլերն իրենց արձագանքներն ունեցան Եվրոպայում։ 1458 թ. Լուդովիկո դը Բոլոնյան երրորդ անգամ ուղևորվեց Արևելք՝ «հույների, հայերի, մարոնիաների, բաբելոնցիների մոտ», ինչպես նաև «Ա. Երկիր, Ալեքսանդրիա, Վրաստան և Տրապիզոն» նպաստելու նրանց միջև դաշինքի կնքմանը[31]։ Հակաօսմանյան զինակցության անդամների թվում էին նաև Փոքր Հայքի Բերդի բեկը, Խույթի և Սասունի ժողովրդապետությունները, որոնցից էլ որպես

---

21 М. А. Гасратян, С. Ф. Орешкова, Ю. А. Петросян, Очерки истории Турции, М., 1983, с. 33—34.

22 С. П. Карпов, Трапезундская империя и западноевропейские государства в 13—15 вв., М., 1981, с. 143.

23 M. Dorothy, M. Vaughan, Նշվ. աշխ., էջ 205։

24 С. П. Карпов, Նշվ. աշխ., էջ 143։

25 Османская империя и страны Центральной, Восточной и Юго-Восточной Европы в 15—16 вв., 1984, с. 35.

26 M. Dorothy, M. Vaughan, Նշվ. աշխ., էջ 206։

27 Ղ. Ալիշան, Նշվ. աշխ., էջ 184—185։

28 W. E. D. Allen, Նշվ. աշխ., էջ 76։

29 С. П. Карпов, Նշվ. աշխ., էջ 145։

30 W. E. D. Allen, Նշվ. աշխ., էջ 76։

31 С. П. Карпов, Նշվ. աշխ., էջ 143։

ոտնագնացներ Եվրոպա են մեկնում երկու պատվիրակներ՝ Հեթում և Ռուբեն անուններով։ Հունգարիայի և Գերմանիայի վրայով նրանք հասնում են Հռոմ, ապա անցնում են Ֆրանսիա և բանակցություններ վարում Կարլոս VII թագավորի ու նրա որդի Լուդովիկի հետ[32]։ Լուդովիկը դը Բոլոնյան մի շարք երկրների տիրակալներից ստանալով նամակներ՝ նրանց դեսպանների ուղեկցությամբ 1460 թ. վերադառնում է Հռոմ։ Նա այնտեղից դիվանագիտական առաքելությամբ մեկնում է Վենետիկ, Ֆլորենցիա, Միլան, Բուրգունդիա, Ֆլանդրիա և Ֆրանսիա[33]։ Սակայն նրա բազմամյա դիվանագիտական ջանքերը արդյունք չունեցան, քանի որ Արևելքում հակաօսմանյան զինակցության միջուկը հանդիսացող Տրապիզոնի կայսրությունը 1461 թ. նվաճվեց թուրքերի կողմից[34]։

Տրապիզոնի նվաճման փաստը չէր կարող անտարբերությամբ դիտվել Ուզուն Հասանի կողմից։ Եվ ոչ միայն այն պատճառով, որ նա Կոմնենոսների հետ կապված էր դաշնակցային և ազգակցական կապերով։ Դեպի Սև ծով ելք չունեցող ակ-կոյունլուների պետության համար Տրապիզոնը ծառայում էր որպես կարևորագույն նավահանգիստ։ Այս իսկ պատճառով էլ Տրապիզոնի և Պարսկաստանի առևտրական հարաբերությունները հնուց ի վեր այնքան սերտ էին, որ նույնացվել էին մինչևիսկ չափ ու կշռի միավորները[35]։

Ռազմականապես թույլ լինելով Օսմանյան կայսրությունից, Ուզուն Հասանը փորձ էր արել բանակցությունների միջոցով թուրքերին հետ պահել Տրապիզոնի կայսրության նվաճումից։ Նա իր մորը՝ Սառա Խաթունին, դիվանագիտական առաքելությամբ ուղարկել էր Մուհամմեդ II-ի ճամբարը։ Չնայած բարեհամբույր ընդունելությանը Սառա Խաթունին չէր հաջողվել Մուհամմեդ II-ին հետ կանգնեցնել Տրապիզոնը գրավելու մտադրությունից։ Տրապիզոնի կայսրության նվաճումից հետո վերջին կայսրը՝ Դավիթը, նրա ութ որդիները և կինն աքսորվել էին Ադրիանուպոլիս[36], որտեղ էլ մահապատժի էին ենթարկվել։ Փրկվել էր միայն մահմեդականություն ընդունած կրտսեր որդին[37]։

Տրապիզոնի կայսրության անկումից հետո Արևելքում հակաօսմանյան պայքարի կենտրոնը տեղափոխվեց ակ-կոյունլուների արքունիք։

Եվրոպայում Տրապիզոնի կայսրության անկման մասին իմացան համեմատաբար արագ, հիմնականում իտալական վաճառականների միջոցով։ Տրապիզոնի նվաճումից (1461 թ. օգոստոս) արդեն երկու ամիս հետո (20 հոկտեմբերի, 1461 թ.) Վենետիկի հանրապետությունն իր դեսպանների միջոցով այդ մասին ծանուցում է Ֆրանսիայի թագավորին՝ կոչ անելով պատերազմ սկսել թուրքերի դեմ[38]։ Հոկտեմբերի 26-ին Տրապիզոնի գրավման մասին Վենետիկը տեղյակ է պահում Հունգարիային[39]։

Փոքր Ասիայում թուրքական նվաճումներն, ըստ իտալացի ժամանակագիրների, «սարսափ առաջ բերեցին օսմանյան աճող հզորության հանդեպ»[40]։ Վենետիկը շտապ միջոցներ ձեռնարկեց հակաօսմանյան զինակցություն ստեղծելու նպատակով և համապատասխան նամակներ ուղարկեց Հունգարիա, Ֆրանսիա ու Հռոմի պապին[41]։ Վենետիկցի շատ հումանիստներ հանդես եկան

---

32 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմությունից, գիրք 2, Երևան, 1959, էջ 8։

33 С. П. Карпов, նշվ. աշխ., էջ 143։

34 Նույն տեղում։

35 Նույն տեղում, էջ 21։

36 Сборник статей по истории Азербайджана, вып. I, Баку, 1949, с. 172.

37 Շահ Իսմայիլ Սևեֆի, էջ 34։

38 С. П. Карпов, նշվ. աշխ., էջ 162։

39 Նույն տեղում։

40 Նույն տեղում, էջ 162—163։

41 Նույն տեղում, էջ 163։

«անագորույն գազան Մուհամմեդի» դեմ համատեղ պայքարի շատագովությամբ[42]։

Հակաօսմանյան զինակցության ստեղծման գործում Վենետիկի և ընդհանրապես իտալական քաղաք-հանրապետությունների ընդգծված շահագրգռվածությունը պայմանավորված էր դարերից եկող մշակութային, տնտեսական և քաղաքական կապերով։ Առանձնապես ընդգրկուն էին նրանց առևտրական կապերը։ Իտալական երեք քաղաքներ՝ Ճենովան, Վենետիկը և Ֆլորենցիան ունեին Եվրոպայում ամենամեծ առևտրական նավատորմերը[43]։ Նրանք Արևելքից Եվրոպա էին ներմուծում մետաքսի մեծաքանակ հումք, որը մշակելով արտահանում էին համաեվրոպական շուկա[44]։ Մետաքսի հումքի հիմնական մատակարարը Պարսկաստանն էր։

Դեռևս իշխանության ժամանակաշրջանից Պարսկաստանը առևտրական սերտ կապեր ուներ Վենետիկի հետ։ Վենետիկցիները՝ այդ «ամենամեծ և ամենաուժեղ առևտրական ազգը»[45], 1331/32 թ. պարսիկների հետ պայմանագիր էին կնքել, որի համաձայն երկու երկրների վաճառականները Թավրիզում և Տրապիզոնում հավասարության սկզբունքով առևտուր պետք է անեին՝ ապահովելով փոխադարձ անվտանգությունը[46]։ Տրապիզոնի վրայով արտահանվող մետաքսը մեծ պահանջարկ ուներ Եվրոպայում, քանի որ նա չինականից ավելի որակյալ էր[47]։ Տարեցտարի արտահանվող մետաքսի քանակն այնքան մեծ էր, որ Տրապիզոնում գտնվող սակավաթիվ վենետիկյան առևտրականները չէին կարողանում ապահովել այդ ծավալի ապրանքափոխանակությունը։ Ուստի Վենետիկի հանրապետության գերագույն մարմինը՝ Մեծ խորհուրդը, 1339 թ. հուլիսի 7-ի որոշմամբ Արևելքում իր հյուպատոսներին իրավունք էր տալիս տեղի բնակիչներից հավատարմագրել վենետիկյան քաղաքացիներ, եթե նրանք ոչ պակաս, քան հինգ տարի գտնվելիս են եղել հյուպատոսի խնամակալության տակ[48]։ Հայերից շատերը, որոնք հնուց ի վեր համատեղ առևտրական գործարքների մեջ էին վենետիկցիների և ճենովացիների հետ, սկսեցին դառնալ այդ հանրապետությունների հավատարմագրված քաղաքացիներ[49]։

Եթե Արևելքի հետ առևտուրն ընդհանրապես շահավետ էր Արևմուտքին[50], ապա Վենետիկի համար այն ուներ կենսական նշանակություն։ «Վենետիկը հիմնական եկամուտը ստանում էր ոչ թե սեփական երկրի ապրանքը արտահանելուց, այլ այնպիսի հասարակությունների ապրանքների փոխանակության միջնորդությունից, որոնք դեռ չէին զարգացել առևտրական և, ընդհանրապես, տնտեսական տեսանկյունից»[51]։ Կապիտալիստական հասարակության վաղ փուլերում առևտուրն է տնտեսության որոշիչ գործոնը։ Նա է մղում և ուղղություն տալիս արդյունաբերության զարգացմանը[52]։

Կ. Պոլսի և Տրապիզոնի կայսրության անկումից հետո մուսուլմանական աշխարհի մի քանի կարևոր կենտրոններից վենետիկյան դեսպաններն իրենց կառավարությանը գրում էին. «Ուզուն Հասանի բարձրացող աստղը կարող է

---

42 Նույն տեղում, էջ 163—164։

43 В. И. Рутенбург, Италия и Европа накануне нового времени, Л., 1974, с. 36.

44 Джорджо Канделоро, История современной Италии, М., 1958, с. 28—29.

45 К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 25, ч. 2, с. 478.

46 С. П. Карпов, Նշվ. աշխ., էջ 51։

47 Նույն տեղում, էջ 32։

48 Նույն տեղում, էջ 53—54։

49 Նույն տեղում, էջ 40։

50 Միջին դարերի պատմություն, հ. 1, Երևան, 1973, էջ 718։

51 К. Маркс, Ф. Энгельс, Соч. ч. I, с. 361.

52 В. И. Рутенбург, Նշվ. աշխ., էջ 32։

օգտագործվել՝ դիմակայելու համար օսմանցիներին»[53]։ Վենետիկցիներն աշխի առաջ ունենալով իրենց վտանգված շահերն Արևելքում և Թուրքական ներխուժման մշտական վտանգը, հանդես էին գալիս որպես հակաօսմանյան զինակցության նախանձախնդիրներ։ «Մեր աւելի հեռատես եւ խորագէտ ծովաբաղաքացիք՝ այլ՝ որչափ որ օսմանեանց հետ դաշնակցութեամբ և հաշտութեամբ վարուէին Կ. Պոլսոյ տիրտիրութեան ատեն, լաւ կու զգային, որ չէր կըրնար երկար ատեն տեւել բռնի բարեկամութիւն. օսմանեանք ուշ կամ շուտ ընդ ծով եւ ընդ ցամաք պիտի շարունակէին իրենց յառաջադիմութիւնը. եւ եթե ոչ ի ցամաքի՝ այլ ի ծով մեծ վտանգ կար Վենետաց, իրենց ծովերու մեջ սփռուած հարուստ կղզեաց կորստեան եւ իրենց ծովային զօրութեան՝ ահարկու հակառակորդի։ Ապա իրենք ալ աչուընին դարձուցին առ Հասան Բէկ. ճանաչելով անոր ոյժը, արթնութիւնը, եւ իրեն նախնեաց աննման քաղաքականութիւնը, եւ յառաջ քան իրօք եւ գրօք՝ ծածուկ կամ համակրական ընտանեութիւն մի ըրին, որ քիչ քիչ փոխեցաւ և ի դաշնակցութիւն։ Վենետաց դքսին Մայլքն՝ ի դեսպանս փոխեցան, որոց եօթն կամ ութ մէկ-մէկու ետեւէ եկած են առ Բէկն՝ նոյնքան քիչ տարիներու միջոց (1470—78 թթ.)»[54]։

Իրադրության նման ծայրահեղ լարումը 1463 թ. հանգեցրեց վենետա-թուրքական պատերազմի բռնկմանը։ Չնայած Վենետիկի մեծաթիվ նավատորմին (մինչև 3.000 նավ) պատերազմում հաջողությունը թուրքերի կողմն էր[55]։ «Մնված լինելով պատերազմում և պատերազմի համար»[56] Օսմանյան կայսրությունը պատերազմելով գտնվում էր իր ամենաբնական վիճակում։ Թուրքերը ոչ միայն հաջող պատերազմ են մղում արևմուտքում՝ գրավելով Էգեյան ծովի կղզիները[57], այլև պատերազմ սկսեցին արևելքում՝ ձեռնամուխ լինելով Ղարամանիայի նվաճմանը։ Արևելքում թուրքերը սկսեցին անմիջականորեն սպառնալ ակ-կոյունլուների պետությանը[58]։ Այս հողի վրա ավելի աշխուժացան ակ-կոյունլուների պետության և Վենետիկի հանրապետության դիվանագիտական փոխհարաբերությունները՝ նպատակ ունենալով այդ առանցքի շուրջ ստեղծել պետությունների զինակցություն։ Ուստի 1464 թ. Ուզուն Հասանը Վենետիկ է ուղարկում Մուհամմեդ փաշայի դեսպանությունը[59]։

Հայերը, որոնք վենետիկցիների հետ իրենց ձեռքում էին պահում իրանական առևտրի հիմնական մասը[60], բնականաբար, առաջիններից էին, որ ներքաշվեցին դիվանագիտական փոխայցելությունների ոլորտը, «խղճի մտոք»[61] գործակցեցին և կարևոր դեր ունեցան այդ ասպարեզում[62]։ Հայերից կազմված առաջին դեսպանությանը, որ դիվանագիտական առաքելությամբ Եվրոպա մեկնեց և, որի դեսպանության պատմությունը ավանդված է վավերագրերով՝ Խոջա Միրաքի գլխավորած դեսպանությունն էր։ Խոջա Միրաքը՝ Միրաք Թավրիզեցին, «հարուստ վաճառական էր բոլոր ապրանքներիս[63] «ի մեծ քաղաքէն և յանուանի շահաստանէն Թաւրիզոյ, զաւակ բարի ծնողաց, ազգաւ հայ և հաւատով քրիստոնեայ»[64]։ Նրա դեսպանության մասին Կատե-

53 M. M. Mazzaoui, նշվ. աշխ., էջ 11։

54 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 185—186։

55 Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն, Երևան, 1973, էջ 394։

56 А. Ф. Миллер, Мустафа паша Байрактар, М.—Л., 1947, с. 36.

57 М. А. Гасратян и др., նշվ. աշխ., էջ 36։

58 Ասիայի և Աֆրիկայի երկրների միջին դարերի պատմություն, էջ 394։

59 Իրանը և Վենետիկի հանրապետությունը (աշխատասիրությամբ Իրաջ Անվարի և Ղոդրաթուլլահ Ռոշանիի), Թեհրան, 1352 (1964), էջ 15 (պարսկերեն)։

60 М. Абидова, նշվ. աշխ., էջ 7։

61 Ա. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 11։

62 Дж. Ибрагимов, նշվ. աշխ., էջ 42։

63 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 213։

64 Հ. Աճառյան, Հ. Սանդալյան, Հայոց նոր վկաները, հ. Բ, Վաղարշապատ, 1902, էջ 3։

րինո Զենոն հետևյալն է գրում. «Ուզուն Հասանի ուղարկած դեսպանները Վենետիկ հասան, որոնք էին Հաճի Մահմեդ, Մուրատ Նիկոլո և Քեֆարսա, պատկառելի մարդիկ, որոնք մեծ հեղինակություն ունեին թագավորի (Ուզուն Հասանի) մոտ, և որոնք մեծ ընծաներ (բերելով) իրենց տիրոջից, առաջարկում էին զինակցություն և պատվավոր դաշնակցություն կնքել Թուրքիայի և Սուլթանի (Եգիպտոսի) դեմ, պայմանով որ վենետիկցիները չթերանան իրենց նավատորմով հարձակվելու երկու իշխանությունների վրա»[65]։

Ղ. Ալիշանը Մուրատի փոխարեն գրում է Միրատ և նույնացնում Խոջա Միրաքի հետ. «Սա (Ուզուն Հասանը) գրգռված էր նոր դաշնակիցներէն՝ որք սկսան վախցնել, թէ օսմանեանք կու պատրաստուին իր երկիրը կոխելու, ուզեց կանոնաւոր և հաստատ բարեկամութիւն և օգնականութիւն հաստատել, և սկսավ իր եղոմէն դեսպան խաւրել ի Վենետիկ (1464—68 թթ.), նախ մէկ երկու Պարսիկ, յետոյ աւելի յաջողելու համար ուզեց Հռովմայ Ս. Քահանայապետի այլ խաւրել. և այս բանիս յարմարագոյն համարեց քրիստոնեայ մի, հայ մի։

Այս երկու դեսպանութեանց միանգամայն կատարող Հայն՝ կոչուէր Միրատ, իր հաւատարիմ սպասաւոր կամ պաշտօնեայն. Թուղթն գրուած ի Սուլտանիա, ուր էր այն ատեն արքայական աթոռ Բէկին (Ուզուն Հասանի) յ'2 օգոստ. 1469 տարւոյ։ Միրատայ անուն կըրնար Մուրատ ըլլալ, բայց հաւանագոյն է որ ըլլայ Միրաք»[66]։

Միրաքի (Մուրատի, Միրաթի) դեսպանությունը Պարսկաստանից Վենետիկ է մեկնում 1469 թ.[67] և 1470 թ. մարտի 7-ին[68] ընդունելության է արժանանում Վենետիկի դոժի կողմից, ներկայացնում է Ուզուն Հասանի նամակները իտալերեն թարգմանություններով հանդերձ, որտեղ իմիջիայլոց, գրված էր. «Ձեր ներկայության կը ղրկեմ այս նվիրակը և հավատարիմ ծառան, որ Միրաթ կը կոչվի, ազգով հայ։ Լրիվ վստահեցեք այն ամեն բանին, որ մեր անունով բերանացիորեն պիտի հաղորդե ձեզի»[69]։ Վենետիկցիները «ընդունեցին առաջարկը և հայտարարեցին, թե միշտ լավ բարեկամներ են եղել թագավորի (Ուզուն Հասանի) հետ, և վստահեցրին նրան, թե այս պատերազմը ավելի հաճելի պիտի լինի իրենց, քան այնքան ուրիշ պատերազմները, որ իրենք մղել են»[70]։

Ժամանած դեսպաններից երեքը՝ այդ թվում և Խոջա Միրաքը, Վենետիկից անցնում են Հռոմ՝ Պապի, ապա Նեապոլի թագավորի մոտ, որպեսզի համոզեն, որ այս իշխանությունները «միանան դաշնակցությանը»[71]։ Նրանցից երկուսը շարունակում են ճանապարհը և, ամենայն հավանականությամբ, այցելում նաև Լեհաստան։ Մինչ այդ «դիվանագիտական գործերով» Լեհաստանից Պարսկաստան էր այցելել Հակոբ անունով լվովցի մի հայ»[72]։ Ի պատասխան այս այցի, լեհական մի այլ դեսպանախումբ 1472 թ. ժամանում է Ուզուն Հասանի արքունիք[73]։

Այդ ժամանակ Լեհաստանի արքա Կազիմիր Յագելոնի քաղաքական խորհրդատուն էր Կալլիմախ Բուոնակորզին՝ լեհական դրականության մեջ հա-

---

65 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 156։

66 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 185—186։

67 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, 1972, էջ 49։

68 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 185—186,

69 Գ. Լ. Զեքիյան, Խոջա Սաֆար Շահ Աբբասի դեսպան Վենետիկի մեջ (Պատմա-բանասիրական հանդես, 1983, № 1, էջ 106)։

70 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 156։

71 Նույն տեղում։

72 Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ դաղթավայրերի պատմության, հ. 1, Երևան, 1964, էջ 200։

73 M. Dorothy, M. Vaughan, նշվ. աշխ., էջ 207։

կաթուրքական ավանդույթների սկզբնավորողը[74]։ Լեհական քաղաքական կյանքի վրա նրա ազդեցությունն այնքան մեծ էր, որ Ուզուն Հասանն էական հույսեր էր կապել Լեհաստանը հակաօսմանյան զինակցության մեջ ներգրավելու խնդրի հետ։ Մինչև իսկ նա 1474 թ. հատուկ դեսպանությամբ պատրաստակամություն էր հայտնել իր ավագ դստերը կնության տալ Յագելոնի որդիներից մեկին և որպես օժիտ խոստանում էր նվաճվելիք Բյուզանդական կայսրությունը, քանի որ աղջկա մայրը Տրապիզոնի կայսեր դուստրն էր՝ հետևաբար Բյուզանդական կայսրության ժառանգը[75]։ Սակայն Ուզուն Հասանի հույսերը չարդարացան։ Լեհաստանի արտաքին քաղաքականությունը հիմնականում ուղղված էր Մոսկովյան պետության դեմ, և երկու հակամարտ պետություններն էլ շահագրգռված էին ուժերի հաշվեկշռի պահպանմամբ։ Այս իսկ պատճառով հաջողություն չունեցան նաև Հռոմի քայլերը՝ Իվան III-ի բյուզանդական գահի ժառանգորդ Սոֆյա Պալեոլոգի ամուսնությամբ Մոսկովյան պետությանը հակաօսմանյան զինակցության մեջ ներքաշելու գործում[76]։

Լեհաստանից Միրաքը 1474 թ. հունիսին անցնում է Ղրիմ, Կաֆայից մեկնում Թինա (Ազովա)[77], որոշ ժամանակ անց ժամանում Թավրիզ։

Միրաքի դեսպանության այցից հետո Վենետիկի սենատը 1471 թ. սեպտեմբերի 10-ի հրամանով Կատերինո Զենոյին նշանակում է հանրապետության դեսպան՝ Ուզուն Հասանի արքունիքում[78]։ «Միրաքայ իմացուց՝ որ իրեն փոխարեն Դուքսն ալ դեսպան կու խաւրէ (զԿատերինոյ Զենոյ), և անոր բերանով ամեն բան կու ծանուցանէ. Բայց վախենալով ալ որ ճամբան փորձանաց չհանդիպի, պարսկերեն պատասխան մ'այլ գրել տուաւ և յանձնեց առ Միրաք՝ որ տանի ի տիրոջ»։[79]։ Այս ընտրության հարցում էական դեր էին խաղացել Զենոյի ազգակցական կապերն Ուզուն Հասանի կնոջ հետ[80]։ Կատերինո Զենոն Դամասկոսում Վենետիկի հյուպատոս Դրագոն Զենոյի որդին էր[81]։

Զենոյի դեսպանությունը ուներ քաղաքական նպատակ. «որպեսզի, եթե չէին կարող ոտքի հանել արևմուտքի վեհապետներին՝ պատերազմելու հասարակաց թշնամու (Թուրքերի) դեմ, որ անկուշտ իր ուժի փառքից ձգտում էր (տիրել) աշխարհի կայսրության, գոնե կարողանան առնվազն համոզել Արևելքի վեհապետներին»[82]։ Վենետիկի կառավարությունը իր կողմից որպես օժանդակություն առաջարկում էր հարյուր ցոկանավ և ավելի շատ այլ նավեր։ Զենոն «ուրախությամբ և պատվով»[83] է ընդունվում Ուզուն Հասանի արքունիքում։ Բանակցությունների շնորհիվ 1472 թ. գարնանը Թավրիզում երկու պետությունների միջև կնքվում է ռազմական դաշինք։ Հակաօսմանյան զինակցությանը մասնակցում էին նաև Հռոմի պապը, Նեապոլը, Հունգարիան, Ալբանիան, Հոռոդոսը, Կիպրոսը, Բուրգունդիան և Ղարամանիան[84]։

---

74 Л. Базылев. Польско-турецкие дипломатические связи в 16 в., (Россия, Польша и Причерноморье в 15—18 вв., М., 1979, с. 14).

75 M. Dorpthy, M. Vaughan, նշվ. աշխ., էջ 207։

76 И. Б. Греков. Очерки по истории международных отношений Восточной Европы 14—16 вв., М., 1963, с.165.

77 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 215—217։

78 Իրանը և Վենետիկի հանրապետությունը, էջ 15։

79 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 188։

80 Իրանը և Վենետիկի հանրապետությունը, էջ 16։

81 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 154։

82 Նույն տեղում, էջ 155։

83 Նույն տեղում, էջ 160—161։

84 Я. М. Махмудов. К вопросу о взаимоотношениях государств Ак-коюнлу и Сефевидов с европейскими странами (2-ая половина 15—начало 17 в.) (Известия АН АзССР, 1987, № 3, с. 36).

Կատերինո Զենոյի դեսպանագնացության արդյունավետ ելքը շատ բանով պայմանավորված էր թագուհու աջակցությամբ. «Այս Դեսպինան ամենից կրոնասեր կինն էր աշխարհում, միշտ լավ քրիստոնյա մնացած ...գործիք դարձավ համոզելու Ուզուն Հասանին՝ պատերազմ հայտարարելու Թուրքիային»[85]։

1472 թ. հակաօսմանյան զինակցության համատեղ ծրագրի համաձայն ակ-կոյունլուները նույն թվականին պատերազմ են սկսում թուրքերի դեմ։ Մինչ այդ, թիկունքն ապահովելու նպատակով Ուզուն Հասանը պատերազմ էր մղել մերձավոր հարևանների և հինավուրց ախոյանների՝ կարա-կոյունլուների և Թեմուրյանների դեմ։ Նա 1467 թ. մայիսին Ճապուղչուրի ճակատամարտում պարտության է մատնում Ջհանշահին և նրա որդի Մուհամմեդին։ Հետագայում նա պարտված և սպանված Ջհանշահի գլուխը ուղարկում է Թեմուրյան Աբու Սայիդին, իսկ Մուհամմեդինը՝ Կ. Պոլիս[86]։

1468 թ. հուլիսին Մարանդի դաշտում Ուզուն Հասանը վերջնական պարտության է մատնում կարա-կոյունլուներին և գրավում Թավրիզը՝ հիմք դնելով լայնածավալ մի տերության, որում ընդգրկված էին Հայաստանը, Ատրպատականը, Իրանը և Իրաքը[87]։ Կարա-կոյունլուների մի մասն ապաստան է գտնում Խորասանում՝ Աբու Սայիդի մոտ, սակայն 1469 թ. Ուզուն Հասանը պարտության է մատնում նաև վերջինիս՝ ապահովելով իրեն երկու ճակատով պատերազմելու վտանգից[88]։

Ռազմական հաջողությունները ոգևորել էին ակ-կոյունլուներին, 1472 թ. թուրքերի դեմ սկսած պատերազմն էլ սկզբնապես ընթանում էր նրանց առավելությամբ։ Սակայն պատերազմի նախնական տասնօրյա հաջողություններին[89] հաջորդեցին ծանր պարտությունները։

1472 թ. օգոստոսին Կոնիայի մոտ Ուզուն Հասանը պարտություն կրեց թուրքերից և կորցրեց իր որդիներից երեքին։ Մինչ այդ էլ (1470 թ. և 1472 թ.) թուրքերը պարտության էին մատնել Ղարամանիային՝ ակ-կոյունլուներին զրկելով իրենց դաշնակցից[90]։

Ցանկանալով Ասիայում դաշնակից պետություն և ռազմականապես Օսմանյան կայսրությունից լինելով ավելի թույլ, Ուզուն Հասանը հարկադրված էր ապավինել Եվրոպային։ «Այս պարտությունից հետո Հասան բեյ թագավորը մի դեսպան ուղարկեց Վենետիկ համոզելու համար, որ պատերազմեն թուրքի դեմ, քանի որ անձամբ իր դեմ է գալիս։ Եվ բացի սրանից նրանցից խնդրեց հրետանի, որ քիչ ժամանակ հետո իրենց նավերով ուղարկվեց Կիպրոս»[91]։ Վենետիկի սենատի 1473 թ. 10 փետրվարի որոշմամբ Ջոզեֆա Բարբարոն դեսպան է նշանակվում Պարսկաստանում[92]։ Նա հմուտ դիվանագետ էր՝ 1436—1451 թթ. դեսպան էր եղել Մոսկովյան պետությունում[93]։ Ռազմական օգնությունը՝ «հրետանի, որոշ թվով ռումբեր, նետարձակներ, հրացան՝ վառոդով, և ուրիշ զանազան տեսակ երկաթեղեններ, չորս հազար դուկատ արժողությամբ»[94], Վենետիկից ուղարկվում է երկու մեծ և երկու փոքր նա-

---

85 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 160—161։

86 Сборник статей по истории Азербайджана, с. 168.

87 О. А. Эфендиев, Образование Азербайджанского государства Сефевидов в начале 16 в., Баку, 1961, с. 27.

88 V. Minorsky, A Civil and Military Review in Fars in 881/1476, BSOS London. v. 10, part I, p. 143. (Bulletin of the School of Oriental Studies).

89 Իրանը և Վենետիկի հանրապետությունը, էջ 17—18։

90 Османская империя, с. 35.

91 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 256։

92 Իրանը և Վենետիկի հանրապետությունը, էջ 16։

93 Նույն տեղում, էջ 17։

94 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 175—176։

վերով։ Բարբարոն իր հետ ուներ «ծովում և ցամաքում ռազմական գործողությունների քարտեզներ, որոնց նպատակն էր Փոքր Ասիայի ազատագրումը»[95]։

Մինչ Բարբարոյի գլխավորած տորմիղը գտնվում էր դեպի Կիպրոս նավարկության մեջ, Ուզուն Հասանը երկրորդ անգամ ծանր պարտություն կրեց (Դերջանի մոտ 1473 թ. օգոստոս), որով էլ վճռվեց պատերազմի ընդհանուր ելքը[96]։ Սակայն Ուզուն Հասանը մտադիր չէր զենքը վայր դնել։ Վենետիկի դոժին 1473 թ. հոկտեմբերի 16-ին գրած նամակով նա պարտությունը պատճառաբանում էր հրազենի բացակայությամբ և հավաստիացնում, որ ապագայում էլ է պատերազմելու թուրքերի դեմ[97]։ Նամակը Վենետիկ էր բերել Կատերինո Զենոն, որն այս անգամ հանդես էր գալիս որպես Պարսկաստանի դեսպան[98]։ Չնայած Զենոյի գործադրած ջանքերին և եվրոպական տիրակալների հավաստիացումներին՝ թուրքերի դեմ համատեղ զինակցության կենսագործումից ոչինչ չէր ստացվում։ Ոչ մի արդյունք չունեցավ նաև Ամբրոսիո Կոնտարինիի դեսպանությունը (13 փետրվարի 1474[99]—16 ապրիլի 1477 թթ.[100])։ Հիշատակելի է, որ այս դեսպանությանը Կաֆայից մինչև Լոռի ուղեկցել է իրեն որպես Ուզուն Հասանի դեսպան ներկայացնող մի հայ, իսկ ճանապարհի մի այլ հատված՝ ոմն հայ քահանա[101]։ Ամբրոսիո Կոնտարինին Ջոզեֆո Բարբարոյի հետ Ուզուն Հասանի կողմից Սպահանում տեսակցության է արժանանում 1474 թ. նոյեմբերի 4-ին[102]։ Երկրորդ անգամ Ամբրոսիո Կոնտարինին Ուզուն Հասանի հետ պաշտոնական տեսակցություն է ունենում 1475 թ. մայիսի 31-ին։ Այս անգամ հանդիպմանը մասնակցում էր Լուդովիկո դը Բոլոնյան, որն այդ ժամանակ արդեն Անտիոքի պատրիարքն էր և հանդես էր գալիս որպես Բուրգունդիայի դուքսի դեսպան[103]։

Եվրոպայի հակաթուրքական ուժերի հետ դիվանագիտական աշխույժ հարաբերություններով հանդերձ Ուզուն Հասանը ծանր պարտություններից հետո նախընտրելի էր համարում խաղաղությունը Օսմանյան կայսրության հետ, քանի որ եվրոպացիների հավաստիացումները չէին հաջորդվում իրական ռազմա-քաղաքական քայլերով։ Ուզուն Հասանը մինչև իսկ փորձ էր արել Ղադի Այլասկյարի դեսպանության միջոցով հաշտություն կնքել Թուրքիայի հետ, սակայն հաջողություն չէր ունեցել[104]։ Փորձ էր արել անգամ խնամիական կապեր հաստատել Օսմանյան տիրակալների հետ և դարձյալ ապարդյուն[105]։ Ուզուն Հասանն իր նախկին քաղաքականությունը շարունակում էր ավելի շատ քաղաքական այլընտրանքի բացակայությունից ելնելով, քան որևէ իրական օգնության ակնկալիքով։ Այդ իսկ պատճառով էլ դը Բոլոնյայի «երկար ճառը... թվում էր, թե քիչ ազդեցություն գործեց Շահի վրա»[106]։

Կյանքի վերջին տարիները, խուսափելով մեծ ընդհարումներից, Ուզուն Հասանն անցկացրեց ապատակությունների ու ավարառությունների մեջ։ Նա 1476 թ. և 1477 թ. արշավեց Վրաստան, որտեղ էլ 1478 թ. հունվարին մահացավ[107]։

95 Իրանը և Վենետիկի հանրապետությունը, էջ 16։
96 Сборник статей по истории Азербайджана, էջ 174։
97 Իրանը և Վենետիկի հանրապետությունը, էջ 18։
98 P. Sykes, նշվ. աշխ., էջ 141—142։
99 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 169։
100 Путешественники об Азербайджане, т. I, Баку, 1961, с. 76.
101 Նույն տեղում, էջ 77։
102 Նույն տեղում, էջ 83։
103 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 239։
104 Նույն տեղում, էջ 231։
105 Իրանը և Վենետիկի հանրապետությունը, էջ 19։
106 Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 239։
107 Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, էջ 51։

Ուզուն Հասանի մահից հետո նրա որդիների միջև ծայր առան գահակալական կռիվներ[108], որոնք ավելի քան երկու տասնամյակ Եվրոպային զրկեցին արևելյան դաշնակցից։ Ուժերի հարաբերակցությունն էապես փոխվեց, և Վենետիկը հարկադրված էր 1479 թ. Մուհամմեդ II-ի հետ հաշտություն կնքել[109]։ 1483 թ. զինադադար կնքեց Հունգարիան, 1484 թ. Մոլդավիան, 1489 թ. Լեհաստանը և Լիտվական պետությունը[110]։

Ուզուն Հասանին հաջորդեց որդին՝ Սուլթան-Խալիլը, որին վեց ամիս հետո սպանեց իր եղբայրը՝ Յաղուբը և թագավորեց 12 տարի՝ 1478—1490 թթ.։ Յաղուբին հաջողվեց որոշ չափով կասեցնել երկրի սրընթաց կազմալուծումը, սակայն երկպառակություններից ուժասպառ երկիրն անշեղորեն գնում էր դեպի կործանում[111]։ Յաղուբն ինքը զոհ գնաց մրցակից խմբակցությունների խարդավանքներին՝ նրան թունավորեցին[112]։ Հաջորդ գրեթե բոլոր ակ-կոյունլու տիրակալները քաղաքական տարբեր խմբակցությունների կամակատարներն էին։

1499 թ. ըստ Ախբարում կնքված համաձայնության ակ-կոյունլուների տիրապետությունը վերջնականապես տրոհվեց. հյուսիսային մասն անցավ Ալվանդին (Թավրիզ կենտրոնով), հարավային մասը՝ Մուրադին (Սպահան) կենտրոնով[113]։ Ստեղծվել էին բոլոր նախադրյալները նոր՝ Սեֆյան հարբստության, իշխանության գլուխ գալու համար։

Սեֆյանների պետությունը հանդիսացավ ոչ միայն ակ-կոյունլուների պետության տարածքային ժառանգորդը, այլև խորացրեց և ընդլայնեց ակ-կոյունլուների նախանշած քաղաքական-դիվանագիտական հարաբերությունները[114]՝ արտաքին քաղաքականության մեջ միշտ անփոփոխ պահելով հակաթուրքական ուղղվածությունը և միշտ ջանքեր գործադրելով հակաօսմանյան զինակցություն ստեղծելու ուղղությամբ։

ГОСУДАРСТВО АК-КОЮНЛУ В СФЕРЕ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ И АРМЯНЕ

А. А. ПАПЯН

Резюме

В результате османских завоеваний (вторая половина 15-ого века) под турецкий контроль попали основные торговые пути Восток—Запад. Имея сложные политические отношения с турками-османами и неся огромные экономические потери из-за негарантированности торговли государство Ак-коюнлу, будучи не в состоянии без союзников воевать с Османской империей, настойчиво искало в Европе союзников. В переговорах по этому вопросу активное участие принимали армяне—как с иранской стороны, так и со стороны заинтересованных европейских стран.

---

108 P. Sykes, նշվ. աշխ., էջ 140։

109 M. Dorothy, M. Vaughan, նշվ. աշխ., էջ 206—207։

110 А. Л. Хорошкевич, Русское государство в системе международных отношений. М., 1980, с. 172.

111 Дж. Ибрагимов, նշվ. աշխ., էջ 44։

112 P. Sykes, նշվ. աշխ., էջ 140։

113 Дж. Ибрагимов, նշվ. աշխ., էջ 47։

114 V. Minorsky, Persia 1478—90, London, 1957, p. 06.